ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

<< ՀԱՌԻՃԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

*1. Հաստատության գործունեությունը*

ա) Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում

բ) Համապատասխանում է պետության քաղաքականության միտումներին,համայնքի շահառու խմբի կարիքներին և հնարավորություններին

գ) Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին

***2. Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմեր***

2.1 Հաստատության շենքային պայմաններ

2.2 Հաստատության նյութատեխնիկական բազա

2.3 Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները

2.4 Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

2.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ

2.6 Հաստատության տրամադրած կրթության որակը

2.7 Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները

2.8 Հաստատությունում առկա հիմնախնդիրները

2.9 Առաջադիմություն

2.10 Աշակերտների թիվ

**3-8 բաղադրիչներն ընդգրկված են ներքոնշյալ Ձև1-ում**

Ոլորտ 1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական

բազան

Ոլորտ 2. Կառավարման և խորհրդակցական մարմիններ

Ոլորտ 3. Մանկավարժական

համակազմ Ոլորտ4. Աշակերտական

համակազմ Ոլորտ5. Ծնողական

համակազմ

Ոլորտ 6. Համագործակցությունը համայնքի,կրթության կառավարման մարմինների,շահառու

կազմակերպությունների հետ Ոլորտ7. Ուսումնական միջավայր

Ոլորտ 8. Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության

արդյունքների

Ոլորտ9. Տեխնոլոգիաներ և հնարավորություն

Ոլորտ10. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

*9. Ակնկալվող արդյունքներ*

*10. Վերահսկողության մեխանիզմներ*

*11.Եզրափակում*

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ժամանակաշրջան ունի իր առաջնահերթությունները: Գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագության , ցանկացած ինֆորմացիայի արագ հասանելիության շնորհիվ աշխարհի որևէ ծայրում ստեղծված գիտելիքը արագորեն տեղայնացվում է աշխարհի մեկ այլ անկյունում: Այժմ քան երբևէ նորարարությունն ու ստեղծագործականությունը մրցունակության և արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոններ են թե անհատական թե ներպետական թե համաշխարհային մակարդակներում:

Կրթությունն այն ճանապարհն է , որը հնարավորություն է ստեղծում անձի մեջ բացահայտելու նոր որակներ և կարողություններ: Կրթությունը անընդհատ պետք է հարմարեցվի անընդհատ փոփոխվող աշխատանքային միջավայրին:

Առաջնահերթություն է դառնում որակյալ մասնագետների պահանջարկը և աշխատանքային շուկայի պահանջներին արագորեն հարմարվելը:

Աճել է հանրակրթության դերը, այն նպաստում է մարդու դերի առավել արժևորմանը հասարակության մեջ՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության և արժեքային որակներ: Անհրաժեշտություն է առաջացել դպրոցը դարձնել այնպիսի միջավայր, որը կնպաստի պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորմանը:

Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.09.2022թ .«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու» մասին հրաման N35-Ն պահանջներին համապատասխան:

Սույն զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթ է , որի հիման վրա պլանավորված է աշխատանքը դպրոցում՝ ապահովելով դպրոցի 5 տարվա զարգացման տեսլականը:

# Զարգացման ծրագրի կառուցվածքը

1. Դպրոցի առաքելությունը
2. Իրավիճակի վերլուծություն
3. Ծրագրի նպատակները
4. Ծրագրի հիմնախնդիրները
5. Ծրագրի բյուջեն
6. Ծրագրի ռիսկերը
7. Ծրագրի գնահատման ցուցիչները, վերահսկողությունը

# Դպրոցում հանրակրթության կազմակերպման սկզբունքներն ու մոտեցումները

Այսօր Հայաստանը կանգնած է լուրջ մարտահրավերների առջև: Կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը:

Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի՝ պետական քաղաքականության հիմքը ազգային դպրոցն է, որի կազմակերպական հիմքը դպրոցի զարգացման ծրագիրն է, որը նպատակաուղղված է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված, մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորմանը:

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակել է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մրցակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Հայաստանի Հանրապետությունը ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը:

Միջնակարգ կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է 12-ամյա միջնակարգ կրթություն:

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է :

*Հայաստանի Հանրապետությունում հանրակրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ <<Լեզվի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությաքմբ օրենքով նախատեսված դեպքերի:*

<u>Հանրակրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի՝</u>

<u>1.</u> Մտավոր, ստեղծագործական, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը

2. մարդկային արժանապատվության պահպանմանը

3.իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը

4. ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը

5.մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական, աշխատանքային գործունեության նախապատրաստմանը

6. որպես ապագա քաղաքացու ձևավորմանը

# Ընդհանուր դրույթներ

<<Հառիճի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի առաջիկա 5 տարիների զարգացման ծրագիրը կազմվել է հանրակրթության ոլորտը կարգավորող հետևյալ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության <<Սահմանադրության>>, <<Կրթության մասին>>, <<Հանրակրթության մասին>> ,<<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>>, <<Երեխայի իրավունքների մասին>> ՀՀօրենքներով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին >> ՀՀօրենքով այլ օրենքներով և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերով:

ՀՀ կառավարության սահմանած Հանրակրթության պետական չափորոշի դրույթներով:

ՀՀ կրթության զարգացման մինչև 2030թվականների պետական ծրագրերը:

Հաստատության աշակերտների համար ստեղծվելու են բոլոր հնարավորությունները իրականացնելու ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով երաշխավորված իրենց իրավունքը:

<<Հառիճի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի զարգացման 2023-2028թթ ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել հաստատության մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհրդի դիտարկումները, առաջարկությունները, կարծիքները:

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը նախասահմանում է 2023-2028 թվականների ՀՀ Շիրակի մարզի «Հառիճի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով կրթական հաստատության ինքնազարգացման ներուժը և Հառիճ համայնքի կարիքները:

Ծրագրի հիմքում դրվել են ՀՀ կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերն ու առանձնահատկությունները:

Ուսումնական հաստատությունն իր կառավարման ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ:

Հիմք ընդունելով Հառիճի միջնակարգ դպրոցի ձեռքբերումները՝ ծրագիրը ուղղված է դրանց աստիճանական զարգացմանը՝ նախանշելով զարգացման ուղղություններն ու ռազմավարությունները:

Հաստատության գործունեության գլխավոր նպատակն է՝ պահպանել ձեռքբերումները՝ շենք շինություն , գույքանյութական արժեքներ, բարոյահոգեբանական առողջ, համագործակցային մթնոլորտ, աշխատանքային կարգապահություն, ուսման բարձր առաջադիմություն, շարունական կրթության ապահովում, ֆինանսատնտեսական գործունեության ճիշտ կառավարում, շրջանավարտների հետ արդյունավետ աշխատանք, ներքին վերահսկողության ձևերի կատարելագործում, ժամանակի պահանջներին համապատասխան աշխատանք ու արդյունք

***Զարգացման ծրագրի հիմքում ընկած են ժամանակակից դպրոցի պահանջները, այն է՝*** սովորողների համար ազգային հիմքի վրա հիմնված որակյալ, մատչելի, բոլորին հասանելի կրթություն ապահովելը՝ նպաստելով բազմակողմանիորեն զարգացած, հայրենասիրական և մարդասիրական ոգով դաստիարակված կարողունակ քաղաքացիների ձևավորմանը: Այդ քաղաքացիները կլինեն մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ և սոցիումին ինտեգրված 21-րդ դարի քաղաքացիներ:

Կրթության հիմքում ընկած են սովորողների առաջնորդական կարողությունների ուսուցումն ու կատարելագործումը՝ որպես քաղաքացիական կրթության կարևոր բաղադրիչներից մեկը:

Դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար կատարվել է առկա իրավիճակի վերլուծություն, բացահայտվել են դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, վեր են հանվել առկա հիմնախնդիրները:

## ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Հառիճի միջնակարգ դպրոցի առաքելությունը ցանկալի ապագայի մտապատկերն է , որը ենթադրում է

Դպրոցում ձևավորել ուսումնական սոցիալ հոգեբանական, ստեղծագործ կրթական միջավայր

***Ժամանակակից դպրոցից պահանջվում է՝***

- Ձևավորել սովորող և սովորեցնող անձ
- Կրթել և դաստիարակել սերունդ՝ ժամանակակից պահանջներին համապատասխան
- Սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ
  Ապագայի մարտահրավերներին դիմակայելու և պայքարելու պատրաստ մարդու ձևավորումը
- Սովորողի մոտ ձևավորել այնպիսի անձնային որակներ, որոնք կկարողանան ապահովել սովորողի շարունակական ուսումը
- ՏՏ կիրառումը դարձնել ամենօրյա կրթության մաս
- Ստեղծել նպաստավոր և տրամադրող պայմաններ հետազոտական գործունեության համար
- Նպաստել սովորողների հաղորդակցական հմտությունների ձևավորմանը
- Ձևավորել սովորել սովորելու կարողունակություն
- Կարևորել լեզուների ուսուցումը՝ մերօրյա մարտահրավերներին դիմակայելու համար

- Նպաստել սովորողների ինքնաճանաչմանը

- Կրթական բոլոր աստիճաններում ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթություն ստանալու հավասար իրավունքը

- Ձևավորել ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն

- Կրթության մեջ կարևորել ոչ միայն գիտելիքը, այլ կարողունակությունները, որը այսուհետ պարտադիր է հանրակրթության պետական չափորոշիչով:

- Երաշխավորել սովորողների ազատությունը

- Հաշվի առնել սովորողի նախասիրություններն ու կարողությունները:

ԴՊՐՈՑԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ /ԱՆՁՆԱԳԻՐԸ/

**Հաստատության անվանումը՝** ՀՀ Շիրակի մարզի <<Հառիճի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ

**Հաստատության հասցեն** ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Հառիճ, 6 փողոց, շենք 7

Դպրոցը հիմնադրվել է 1994թ :

Շենքի ընդհանուր մակերեսը՝931 քառ.մ. որից մաքրվող մակերես 720.5 քառ.մ, դպրոցին կից հողամաս 300 քառ.մ:

Դպրոցն աշխատում է 5-օրյա աշխատանքային ռեժիմով, միահերթ, ունի լոկալ ջեռուցում:

Հատատված է ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, որի հիման վրա դպրոցի մյուս օղակները պլանավորել են իրենց ախատանքները:

Դպրոցն ունի 10 դասարան:

Դպրոցն ունի կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ:

ՈՒնի հաշվեկշիռ և գանձապետական հաշիվ, ինչպես նաև դպրոցական կայք և ֆեյբուքյան էջ:

## ա) Դպրոցն ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում

Դպրոցի նախագծային հզորությունը՝ 195 աշակերտ

Դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը՝

- 1. Տարրական ընդհանուր Iաստիճան՝ -**լիցենզիա Ա N 0539 /52 տեղ/**
- 2. Հիմնական ընդհանուր IIաստիճան՝ - **լիցենզիա Ա N 0528/ 73 տեղ/**
- 3. Միջնակարգ ընդհանուր IIIաստիճան՝ - **լիցենզիա Ա N 0431 /45 տեղ/**
- 4. Տնային ուսուցում - **լիցենզիա Ա N 0431**
- Աշակերտներից մեկը ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք/ԿԱՊԿ/
- 2022-2023 ուս. տարում դպրոցում կազմավորվել է 10 դասարան , որտեղ սովորում է 135 աշակերտ, այդ թվում՝
- 1. տարրական դպրոց - 49 աշակերտ /**4 դասարան/**
- 2. միջին դպրոց - 73 աշակերտ /**5 դասարան**/
- 3. ավագ դպրոց – 13 աշակերտ /**2ավագ/**
- Չի կազմավորվել 10-րդ դասարան
- Առկա է երկկազմ դասարան/10-րդ - 12-րդ/

- Դպրոցի սովորողների թիվը ըստ տարեթվերի

| • Սեպտեմբերի • 1-իդրությամբ | • 2018-2019 • ուստարի | • 2019-2020 • ուստարի | • 2020-2021 • ուստարի | • 2021-2022 • ուստարի | • 2022-2023 • Ուստարի |
|---|---|---|---|---|---|
| Աշակերտներիթիվ | 112 | 120 | 120 | 125 | 135 |

| 2020-2021 ուստարի | | |
|---|---|---|
| **Դաս** | **Դասարանների քանակ** | **Սովորողների թիվ** |
| I | 1 | 13 |
| II | 1 | 7 |
| III | 1 | 14 |
| IV | 1 | 14 |
| V | 1 | 17 |
| VI | 1 | 21 |
| VII | 0,5 | 9 |
| VIII | 1 | 9 |
| IX | 0,5 | 5 |
| X | 1 | 8 |
| XI | 0,5 | 4 |
| XII | 0,5 | 4 |
| | | |

| 2021-2022 ուստարի | | |
|---|---|---|
| Դաս | Դասարանների քանակ | Սովորողների թիվ |
| I | 1 | 18 |
| II | 1 | 10 |
| III | 1 | 8 |
| IV | 1 | 14 |
| V | 1 | 14 |
| VI | 1 | 16 |
| VII | 1 | 21 |
| VIII | 1 | 8 |
| IX | 1 | 9 |
| X | 0 | 0 |
| XI | 0,5 | 8 |
| XII | 0,5 | 4 |
| 2022-2023 ուստարի | | |
| Դաս | Դասարանների քանակ | Սովորողների թիվ |
| I | 1 | 13 |
| II | 1 | 18 |
| III | 1 | 9 |

| | | |
|---|---|---|
| IV | 1 | 8 |
| V | 1 | 13 |
| VI | 1 | 14 |
| VII | 1 | 16 |
| VIII | 1 | 21 |
| IX | 1 | 8 |
| X | 0,5 | 5 |
| XI | 0 | 0 |
| XII | 0,5 | 8 |

***Զարգացման ծրագրով նախատեսվում է բավարարել սովորողի հետևյալ կրթական կարիքները***

- Հայրենասեր և ազգասեր
- Բազմակողմանիորեն զարգացած
- Համամարդկային արժեքներ կրող
- Սեփական դիրքորոշում ունեցող
- Մասնագիտորեն կողմնորոշված
- Մրցունակ
- Ժամանակին համահունչ քայլող:

Բարենպաստ կրթական միջավայրում ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով կձևավորվի 21-րդ դարի կարողունակ քաղաքացի:

## բ) Համապատասխանում է պետության քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբի կարիքներին և հնարավորություններին

Ըստ զարգացման ծրագրի՝դպրոցի կրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր,հոգևոր և սոցիալական զարգացմանը,նրա անձի՝որպես ապագա քաղաքացու ձևավորմանը,մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության, ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը:

Դպրոցի գործունեությունը համապատասխանում է մեր երկրի կրթական քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբերի կարիքներին և հնարավորություններին:

Հաստատության լիարժեք գործունեությունը միտված է սովորողի մոտ մարդասիրական, ազգային , համամարդկային արժեքների ձևավորմանը, հայրենասիրության , արժանապատվության, պատասխանատվության հանդուրժողականության սերմանելուն, բնապահպանական աշխարհայացքի ձևավորմանը:

Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով:

Դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի , այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքների ապահովումն է :

**գ) Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին**

**Հաստատության ենթակառուցվածքներն ու հնարավորությունները.**

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության (հետայսու ՝հիմնադիր) :Դպրոցը տիպային շենք է՝ կառուցված 1994թ-ին:

Ունի տնօրենի աշխատասենյակ, ուսուցչանոց, 1 համակարգչային դասասենյակ, 1 լաբորատորիա, 1 ՆԶՊ առարկայի դասասենյակ , 44-օրյա պատերազմում զոհված դպրոցի սաների անուններով անվանակոչված 2 դասասենյակ, բեմ միջանցքում, մարզադահլիճ, 2 հանդերձարան, սպորտհրապարակ , «Արմաթ» լաբորատորիա, 4 սանհանգույցներ, որից 2-ը գործում է , 2-ը ոչ. գրադարան, ճաշարան, պահեստ, արհեստանոց, 1 առանձնացված սենյակ կաթսաների համար նախատեսված: Ինտերնետային կապի առկայություն, գործում է հրդեհազդարարման համակարգ:

Կրթական գործընթացի կազմակերպման համար պետք է ստեղծել բարենպաստ ուսումնական միջավայր՝ անհրաժեշտ նյութեր, պարագաներ, սարքեր ու այլ միջոցներ, որոնք կարելի է ապահովել կամ դպրոցի տնտեսված միջոցներով կամ այլ միջոցներով՝ դոնոր կազմակերպություններ, բարերարներ, կառավարությունից՝ մրցութային կարգով, ձեռնարկատիրական գործունեությամբ ապրանքի իրացում ,դրամաշնորհ:

Դպրոցականները օգտվում են գյուղի բուժկետից, քանի որ հաստատությունը այդպիսի հաստիք չունի:

Արդյունավետ ու նպատակային է ճաշարանի գործունեությունը:

Հանրակրթության բարեփոխման միտումները նպատակաուղղված են անձի գիտելիքների ձեռք բերման, ներդրման և

սերունդներին փոխանցելու գործընթացով: Դպրոցի գործունեության մեջ որակյալ մասնագետների պահանջը դարձել է արդիական: Պակաս կարևոր չէ սովորողի միջավայրը հարմարավետ հետաքրքիր, հիգիենիկ և բովանդակալից դարձնելը: Համապատասխան միջավայր ստեղծելու հարցում դպրոցն ունի բավականաչափ հնարավորություն: Այլ է պատկերը մասնագետ կադրերով դպրոցը համալրելու հարցում: Մանավանդ, որ միջին մասնագիտական կրթություն ունեցող 2 մանկավարժներ կան: ՈՒրախալի է որ 2 մանկավարժներն էլ դիմել են կամավոր ատեստավորման:

<<Հանրակրթության մասին >>օրենքով նախատեսվող փոփոխությունը կարևոր օրենսդրական նախաձեռնություն է , որով ուսուցիչներին գործուղման հնարավորություն է տրվում գյուղական բնակավայրեր, որոնցում դրա կարիքը կա: Այսինքն ավարտական կուրսի ուսանողները կկարողանան դասավանդել գյուղական դպրոցներում:

Սովորողների մասնագիտական կողմնորոշման մեջ մեծ է ուսուցչի մասնագիտություն ձեռք բերելը  և հարազատ դպրոցում դասավանդելը: Այդ է վկայում աշակերտական խորհրդի հետ հանդիպման ժամանակ արտահայտած կարծիքները:

Չնայած դպրոցում դասավանդած ուսուցիչներից շատերը տեղաբնակ չեն, բայց շնորհիվ կառավարության որոշման փոխհատուցվում է նրանց երթևեկության ճանապարհածախսը, որը շատ գովելի է ու խթանիչ:

| N | 23.06.2023Թ-ի դրությամբ | |
|---|---|---|
| 1 | ՈՒսուցիչների ընդհանուր թիվը | 21 |
| 2 | Վարչական աշխատողներ | 3 |
| 3 | **Սովորողների թիվ** | 135 |
| 4 | *Բարձրագույն կրթությամբ ուսուցիչներ* | 19 |
| 5 | Տարակարգ ունեցող ուսուցիչներ | 0 |
| 6 | *Կամավոր ատեստավորված ուսուցիչներ* | 0 |
| 7 | *Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ* | 1 |
| 8 | *Ուսուցիչ-սովորող փոխհարաբերություն* | 6 |
| 9 | *Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածություն* | 16 |
| 10 | *Առարկայական մեթոդմիավորում* | 2 |
| 11 | *Ուսումնաօժանդակ անձնակազմ* | |
| 12 | *հաշվապահ* | 1 |
| 13 | *օպերատոր* | 1 |
| 14 | *գործավար* | 1 |
| 15 | *գրադարանավար* | 1 |

## Հաստիքացուցակ

| հ/հ | Հաստիքների անվանում | Հաստիքների միավորների քանակ |
|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 |
| 2 | Տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքների գծով | 0.5 |
| 3 | Տնօրենի տեղակալ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով | 0.5 |
| 4 | Վարչատնտեսական համակարգող | 1 |
| 5 | Հաշվապահ | 0.75 |
| 6 | Ջինդեկ | 1 |
| 7 | Քաղպաշտպանություն | 0.5 |
| 8 | Համակարգչային օպերատոր | 0.75 |
| 9 | Գրադարանավար | 0.5 |
| 10 | Դաստիարակչական աշխատանքների | 0.5 |

| | | |
|---|---|---|
| | *կազմակերպիչ* | |
| *11* | *Ռիտուցչի օգնական* | *0.5* |
| *12* | *Լաբորանտ* | *0.25* |
| *13* | *Տնտեսվար* | *0.75* |
| *14* | *Հավաքարար* | *1.5* |
| *15* | *Պահակ* | *0.5* |
| *16* | *Հնոցապան* | *0.5* |

## *ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄ*

| | |
|---|---|
| Մինչև 30 տարեկան | *1* |
| *31-40 տարեկան* | *6* |
| *41-50 տարեկան* | *6* |
| *51-60 տարեկան* | *3* |
| *61 և ավելի* | *6* |

## *Կառավարման մարմիններ*

Հաստատության  կառավարումն իրականացվում է համաձայն կանոնադրության:

**Դպրոցի կառավարում համաձայն կանոնադրության**



## *ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ*

Համաձայն հաստատության կանոնադրության ՝ կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով հաստատությունում գործում են խորհրդակցական մարմիններ:



| | |
|---|---|
| *2. Իրավիճակի վերլուծություն. ուժեղ և թույլ կողմեր* | |
| **Հաստատության շենքային պայմաններ** | |
| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
| **Դպրոցը** հիմնադրվել է 1994թ:<br>Շենքի ընդհանուր մակերեսը՝ 931 քառ.մ<br>Շենքի մաքրվող մակերես 720.5 քառ.մ Դպրոցին կից հողամաս 300 քառ.մ<br>**2010թվականին** վերանորոգվել է<br>**2017թ** մարզադահլիճի կառուցման ծրագիրն իրականացվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից:<br>**Դպրոցական շենքը** տիպային է, 1 հարկանի քարե շինություն , բաղկացած երեք մասնաշենքերից: Օգտագործվում է ամբողջությամբ<br>**ՈՒնի լուսավոր**, ընդարձակ շենքային պայմաններ, 12 դասասենյակ,<br>1 համակարգչային սենյակ, 1 ՆԶՊ կաբինետ, 1 լաբորատորիա, 1 արհեստանոց, 1պահեստ , տնօրենի աշխատասենյակ:<br>**Ունի սպորտհրապարակ,** մարզադահլիճ՝ ապահովված 2 հանդերձարաններով, մարզիչի (ուսուցչի)սենյակ, ունի 2-րդ ելք,ներքին հրդեհաշիջման ցանց:<br>**Դպրոցն ունի** ճաշարան և խոհանոց:<br>**Դպրոցն ունի** էլեկտրական վահանակի անկյուն ,պահեստային սենյակ: | **Դպրոցը կարիք ունի՝**<br>• Ներքն հարդարման<br>Դպրոցի բակի կանաչապատում<br>• Ապաստարանի<br>• Կոյուղագծերի անցկացման<br>• Միջանցքի սալիկապատման |

| | |
|---|---|
| **Դպրոցն ապահովված է** լոկալ(գազի) ջեռուցման համակարգով, տարահանման ելքերով, :<br>**Տարածքն առանձնացված է** ցանկապատով,կանաչապատված։<br>**Դպրոցն ունի** 4 սանհանգույց,որից գործում են 2-ը<br>**Դպրոցական շենքի** պայմանները համապատասխանումեն անվտանգ շահագործման նորմատիվներին, պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը:<br>**Դպրոցի** դռները, պատուհանները փոխված են։<br>**Դպրոցի** տանիքը վերանորոգված է:<br>**Դպրոցն** ունի շուրջօրյա ջրամատակարարում: | • Դասասենյակների հատակի նորոգման |

| Հաստատության նյութատեխնիկական բազան | |
|---|---|
| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
| **Հաստատությունն** ունի 4 համակարգիչ, 1 պրոյեկտոր, 2 բազամաֆունկցիոնալ սարք Դպրոցում գործում է << ԱՐՄԱԹ >> լաբորատորիա 8 համակարգիչներով, WI-FI սարք- 1 հատ, աշակերտական սեղան աթոռներ, /հնամաշ/, 4 գրապահարան, 2 աշխատասեղան, 2 չիրկիզվող պահարան: | • **Դպրոցը կարիք ունի՝**<br>• Համակարգիչների, նոութբուքերի, պրոյեկտորի, բազմաֆունկցիոնալ տպիչի<br>• ՈՒսումնական նյութեր, դիդակտիկ պարագաներ, անհրաժեշտ մեթոդական գրականության<br>• Գրադարան ՝ գեղարվեստական գրականությամբ և ուսումնական նյութերով հագեցվածության<br>• Գրապահարաններ, աշխատասեղաններ, համակարգչային սեղաններ, աշակերտական սեղան աթոռներ, կախիչներ՝ զգեստների համար նախատեսված,<br>• Անհատական պաշտպանության<br>• Լաբորատոր նյութերի, սարքավորումների, լաբորատորիայում շուրջօրյա ջրամատակարարման, անվտանգություն ապահովող սարքավորումների |

| | |
|---|---|
| | • Առարկայական կաբինետների ձևավորման<br>• Մարզադահլիճի<br>• Խոհանոցային գույքի |

## Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները

Կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների դերը դպրոցի կառավարման մեջ կարևոր է, նրանց համատեղ գործունեության արդյունքում դպրոցի կառավարումը դառնում է ավելի արդյունավետ, տեսանելի և մասնակցային:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմերը |
|---|---|
| **Դպրոցն** ունի կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ և աշակերտական խորհուրդ, որոնք կատարում են իրենց վերապահված գործառույթները:<br>**Դպրոցն** ունի 2 առարկայական մասնախմբեր, որոնք ամիսը մեկ անգամ գումարում են նիստեր, կազմակերպում ուսումնադաստիարակչական աշխատանքներ:<br>**Դպրոցն ունի** կոլեգիալ կառավարման մարմին՝ միացյալ խորհուրդ/Նախապետավանի միջնակարգ դպրոց, Հառիճի միջնակարգ դպրոց, Մեղրաշենի միջնակարգ դպրոց/ իրականացնում են ընթացիկ վերահսկողություն: Խորհուրդը գործում է դպրոցի<br>կանոնադրությամբ սահմանված կարգով՝ իրեն վերապահված գործառույթներին համապատասխան:Նրա գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը: Խորհուրդը<br>շահագրգիռ է դպրոցի | •Դպրոցը չունի հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդ<br>. Տնօրենի ընտրության կարգի փոփոխությունը բերել է միացյալ խորհրդի ակտիվության համագործակցության նվազման:<br>Դպրոցը չունենալով լրացուցիչ ֆինանսական միջոց, չի համագործակցում որևէ միացյալ խորհրդի հետ:<br>Միացյալ խորհրդի անդամների առնվազն կեսը ակտիվ չեն լինում, քանի որ քննարկվող հարցը իրենց |

| | |
|---|---|
| առաջընթացի հարցում,պատրաստակամ է աջակցելու բոլոր նախաձեռնություններին: Պատասխանատու են վերաբերվում իրենց վերապահված պարտավորություններին:<br><br>Խորհրդի անդամների քանակի շատ լինելը նպաստում է վերահսկողության բարձրացմանը, քանի որ տնօրենի հաշվետվությունը լսելի է դառնում նաև մյուս երկու դպրոցների համար: Տարին առնվազն երկու անգամ տեղի են ունենում կառավարման խորհրդի նիստեր , որտեղ քննարկվում են միջնաժամկետ ծրագրի կատարողականը և տարիֆիկացիոն ցուցակը և տեղեկագիրը: Դպրոցի եռամսյակային հաշվետվությունները տարեկան նախահաշիվը քննարկվում , իսկ բյուջեի նախագիծը լրամշակվում է խորհրդի կողմից: Հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայք էջում և տեղադրվում հայտերի անկյունում:Խորհրդի վերահսկումը տնօրենի գործունեությունը դարձնում է ավելի արդյունավետ, թափանցիկ:<br><br>**Մանկավարժական խորհուրդը** համալրված է փորձառու և որակյալ մասնագետներով: Խորհուրդը ձևավորված է 24 մանկավարժներից, որից 22-ը ունեն բարձրագույն մասնագիտական որակավորում , 2-ը միջին | դպրոցին չի վերաբերվում<br><br>•ՈՒսուցիչների մեծ մասը դժվարանում է ՏՀՏ օգտվելիս,<br><br>•Միջին մասնագիտական որակավորում ունեցող մանկավարժներ<br><br>•Կամավոր ատեստավորման , տարակարգի ցածր մասնակցություն<br><br>•Հասարակական կազմակերպությունների կողմից անցկացվող սեմինարներին մասնակցության պասիվություն |

| | |
|---|---|
| մասնագիտական որակավորում: 1 ուսուցիչ մասնակցել է կամավոր ատեստավորման, ևս 2-ը ցանկություն ունեն մասնակցելու կամավոր ատեստավորման, պարտադիր ատեստավորում անցած 24 ուսուցիչներ: Յուրաքանչյուր տարի օգոստոսյան առաջին նիստին սահմանված կարգով ձևավորվել է հաստատության մանկավարժական խորհուրդը՝ մեկ ուսումնական տարի ժամկետով, ընտրվել մանկավարժական խորհրդի նիստերի մշտական քարտուղար և հաստատել իր աշխատակարգը: Ժամանակի պահանջներին համահունչ՝ վերափոխվել է հաստատության մանկավարժական համակազմը, համալրվել երիտասարդ և արհեստավարժ մասնագետներով:<br>**Աշակերտականխորհուրդը** գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Աշակերտները բավական կազմակերպված են , ակտիվ, ազատ իրենց մտքերն ու կարծիքներն | •Աշակերտական խորհրդի դերը չի կարևորվում: Չեն իրագործվում սովորողների նախաձեռնությունները: |

| | |
|---|---|
| արտահայտելիս: Հետաքրքրված են մշակույթով և հոգևոր արժեքներով՝ պատրաստակամ ցանկացած նախաձեռնության համար: Ակտիվորեն մասնակցում են դպրոցի կյանքին, շատ անգամ դառնում միջոցառումների հեղինակ, մասնակցում հանրօգուտ աշխատանքների: Հետաքրքրված են նորարարական ծրագրերով:<br>Ծնողական խորհուրդը Ծնողական խորհուրդը պատրաստակամ է աջակցելու դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին: Ծնողական խորհուրդը դասարանական ծնող խորհուրդների աջակցությամբ կազմակերպում է էքսկուրսիաներ և այլ միջոցառումներ: | • Ծնող- դպրոց կապի պասիվություն<br>• Ծնողների նախաձեռնությամբ դեպի թանգարաններ և մշակութային օջախներ այցելությունների բացակայություն |

## ՆՊԱՏԱԿ

.Կառավարման  և խորհրդակցական մարմինների  դերի բարձրացում

.Կառավարման խորհրդի դերի բարձրացումը դպրոցի հետ համագործակցության արդյունքում

. Մանկխորհրդի լիազորությունների գործնական կիրառում

.Ծնողխորհրդի հետ համագործակցության բարելավում և դերի բարձրացում

.Աշխորհրդի գործունեության ակտիվացում, աշակերտական խորհրդի դերի կարևորում, սովորողների նախաձեռնությունների խթանում:

,Շրջանավարտների հոգաբարձուների խորհուրդների ձևավորում

**Խնդիր**

Կատավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների դերը դպրոցի կառավարման մեջ կարևորելը, նրանց գործունեության արդյունքում դպրոցի կառավարումը դարձնել ավելի արդյունավետ, տեսանելի և մասնակցային

## Գործողություններ

**1.Կառավարման խորհուրդ**

Լիազորությունների ընդլայնում հետևյալ ուղղություններով

ա. ներկայացնել կրթության կառավարման լիազորված մարմնի առաջարկությունները զարգացման ծրագրի վերաբերյալ

բ. նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդլայնում

գ. խորհրդի անդամների մասնակցությունը դպրոցի կրթական ծրագրերին միջոցառումներին, ներքին գնահատման աշխատանքներին

դ. մյուս խորհուրդների հետ սերտ համագործակցության ապահովում

**2.Ծնողական խորհուրդ**

ա. խորհրդի անդամներին ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում

բ. ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդման համար կազմակերպել սեմինարներ, հանդիպումներ

գ.կազամակերպել համատեղ ծնող- ուսուցիչ -աշակերտ քննարկումներ, միջոցառումներ

դ. ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում

ե.ծնող խորհրդի նիստում հանդես գալ առաջարկություններով, խթանել հետաքրքիր նախաձեռնությունների իրականացմանը

**3. Աշակերտական խորհուրդ**

ա. ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը

բ կազմակերպել միջոցառումներ, հանդիպումներ, բանավեճեր, կլոր սեղաններ և մրցույթներ, որոնք նպատակաուղղված կլինեն ազատ մտածողության զարգացմանը, ինչպես նաև պատասխանատվության ձևավորմանը

գ.ամրապնդել ուսուցիչ -աշակերտ, ծնող -աշակերտ, համայնք- աշակերտ հարաբերությունները

դ.աշակերտական խորհրդի գործունեության հիմքում, կարևորելով վարվելակերպի ձևավորումը շարունակել ակտիվ հասարակական անհատի կրթման, սեփական կարծիքների ազատ արտահայտման ուղղորդման ուղղությամբ կատարվող աշխատանքները:

**4. Մանկավարժական խորհուրդ**

ա. խորհրդի լիազորությունների գործնական կիրառում

բ. ուսուցիչների աշխատանքների գնահատման և խրախուսման նոր գործիքների կիրառում

գ.ուս. պլանների, ծրագրերի և դասագրքերի համալիր ստեղծման գործընթացին ուսուցիչների ակտիվ մասնակցության ապահովում

դ. սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի առավել արդյունավետ աշխատակարգի մշակման և կիրառման ներդնում

ե. առաջավոր փորձի հիման վրա դպրոցի աշխատանքների ակտիվացում

զ. ուշադրության կենտրոնում պահել մանկխորհի ընդունած որոշումների ճիշտ և ժամանակին կատարումը

**5. Շրջանավարտների խարհուրդ**

ա. ստեղծել շրջանավարտների խորհուրդ

բ. կրթական գործընթացի զարգացմանը աջակցելու գործում շրջանավարտների խորհրդի դերի կարևորում

գ.այդ խորհրդի կազմում ընդգրկել անհատ ձեռներեցների, դպրոցի գործունեության շահագրգիռ անձանց

դ. նրանց ներգրավել դպրոցի համար ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական միջոցների համալրմանը

**6.Հոգաբարձուների խորհուրդ**

ա, առաջիկա 5 տարիների ընթացքում ձևավորել հոգաբարձուների խորհուրդ

բ. կազմում ընդգրկել դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, տեղական իշխանությունների ներկայացուցիչների, անհատ ձեռներեցների

գ. նրանց ներգրավել դպրոցի համար ֆինանսական միջոցների ստեղծման, նյութատեխնիկական բազայի ամրապնդման գործընթացում

դ.հոգաբարձուների նպատակը պետք է լինի ներդրումներ և նվիրատվություններ ձեռք բերելը՝ այդ գործընթացում ներգրավել կամավորների

## ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ներդպրոցական վերահսկողությունը ուսումնադաստիարակչական գործընթացի վերլուծությունն է, որը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում վերացնել անճշտությունները, շտկել թերությունները:

### ՆՊԱՏԱԿ

ՈՒսումնադաստիարակչական վիճակի մասին ամբողջական և համակողմանի տեղեկատվություն

### ԽՆԴԻՐՆԵՐ

I .Դպրոցի բոլոր պլանների մշակման վերահսկողություն

II. ՈՒսուցիչների աշխատանքի վերահսկում

III. Աշակերտների կողմից գիտելիքիների յուրացման գործընթացի վերահսկողություն

### ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I .1.Վերահսկել հաճախումների հաշվառման մատենավարության , էլեկտրոնային մատյանների ստուգում/EMISI/ արդյունքների քննարկում մեթոդ միավորման նիստում

1.2. Վերահսկել բոլոր տեսակի պլանների  պատշաճ և ժամանակին կատարումը.

ա. առարկայական մասնախմբերի աշխատանքային պլաններ

բ. դասղեկների տարեկան աշխատանքային պլանների ուսումնասիրություն և վարման վիճակի վերաբերյալ տնօրենի ՄԿԱ գծով տեղակալի կողմից համապատասխան տեղեկատվության ներկայացում մանկավարժական խորհրդում

գ. փոխտնօրենների տարեկան աշխատանքային պլաններ

դ. մանկավարժական աշխատողների աշխատանքային պլանները

1. Հաստատել և վերահսկել հերթապահության կարգը

I.4. Խմբակների , ուսումնական նախագծերի և երկարօրյա ուսուցման ծրագրերի իրականացում և արդյունքների գնահատում. դրանց արդյունքների քննարկում մեթոդ միավորման նիստերում

II 1. կատարել ուսուցիչների աշխատանքների մշտադիտարկում

II 2. Դասավանդվող առարկաների արդյունքների մշտական վերահսկում

II 3. ուսուցիչների փորձի ուսումնասիրություն

II 4. առարկայական ծրագրերի կատարողականի պարբերական ստուգում

II 5. Ծանոթանալ ուսուցչի մասնագիտական պարտականությունները փաստաթղթերին, ուսումնական ծրագրերին

II 6. Դասղեկական ժամերի դիտարկում՝ նպատակ ունենալով այդ ժամերին՝ դասղեկի աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների ստուգումը/ 2-4 դասարաններում/

II 7. Դասալսումների իրականացում ուսուցիչների մոտ: Ըստ դասալսումների արդյունքում կատարված արդյունքների վերլուծությունների դասավանդող ուսուցիչների աշխատանքի արդյունավետության գնահատում/ՄՄ նախագահ/

II 8. թեմատիկ աշխատանքների ուսումնասիրություն թեմայի յուրացման աստիճանը ստուգելու նպատակով/5-9 դասարաններում/

II 9. Դասղեկական ժամերի դիտարկում՝ համեմատելով այդ ժամերի անցկացումը դասղեկի աշխատանքային պլանով նախատեսված թեմատիկ բովանդակությանն ու առաջադրված նպատակներին/ 5-9/ դասարաններ

II 10. Դասալսումներ 9-րդ դասարանում՝ դասի թեմայի յուրացման աստիճանը ստուգելու նպատակով

II 11. 10-11 դասարններում դասերի պլանավորման արդյունավետությունը գնահատելու նպատակով դասալսումներ

II 12 . Թեմատիկ գրավոր աշխատանքների անցկացում, քննար**կում և արդյունքների վերլուծություն/ մայիս ամսվա վերջում/**

| *Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության Կառավարման մարմինների, շահառու Կազմակերպությունների* | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| Դպրոցը կրթական գործունեությունն իրականացնում է ի շահ անհատի, հասարակության և պետության: Դպրոցն համագործակցում է՝ ՀՀ կառավարության, ԿԳՄՍ նախարարության, Շիրակի մարզպետարանի, Արթիկի համայնքապետարանի, Հառիճ վարչական կենտրոնի, Արթիկի ՏՄԱԿ-ի, ՀՄԿ-ի, ԿՋՆԱԿ—ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ուսուցիչների վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների, ՀՀ առողջապահության նախարարության, ԱԻՆ-ի, ՊՆ- ի, իրավապահ մարմի, բարձրագույն ուսումնական հաստատությունների, մասնագիտացված ուսումնական հաստատութունների, <<Հառիճի արվեստի դպրոց>>ՀՈԱԿ-ի, Արթիկ համայնքի արվեստի և սպորտի դպրոցների հետ: Դպրոց ընտանիք կապը առավել քան սերտ է/դասղեկների կատարած աշխատանքների շնորհիվ/ : Փոքր բնակավայր է, լինում են հաճախակի այցելություններ դպրոց : Առավել ակտիվ են ծնողները ժողովներին , դպրոցական միջոցառումներին և ծնողական ժողովներին: | • Բնապահպանական ԾԻԳ -ի հետ համագործակցության բացակայություն<br><br>• Կրթական տարբեր հիմնադրամների հետ համագործակցության պասիվություն<br><br>• Բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցության բացակայություն<br><br>• Հարակից դպրոցների հետ կապի բարելավում<br><br>Վարչական կենտրոնը ունենալով սահմանափակ իրավունքներ դպրոցի կառավարման գործում կատարում է |

| | |
|---|---|
| Կա համագործակցություն կրթություն թերթի խմբագրության հետ՝ ուսուցչի թափուր տեղի մրցույթի հայտարարության տեսքով/տարեկան առնվազն 2 անգամ:<br>Հաստատությունը Արթիկ խոշորացված համայնքի դպրոցներից մեկն է հանդիսանում և հնարավորության դեպքում մասնակցում է համայնքում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին/կամ հրավիրված կամ մասնակից/:<br>Աշխատանքներ են տարվում երկարօրյա խմբերի ձևավորման և արտադպրոցական դաստիարակության կազմակերպման գործում:<br>Սովորողների ուսումնառության և ժամանցի կազմակերպման ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման համար ստեղծել խմբակներ՝ ուսուցչի կամ ծնողների առաջարկությամբ մանկավարժական խորհրդի նիստում հավանության արժանանալու դեպքում: | ավելի շատ խորհրդատվական գործառույթ, քան կառավարման:<br>Խմբակների, թատրոնի համերգների բացակայությունը ծնողներին չի մոտիվացնում. ապրելով գյուղում իրենց երեխաներին ուղղորդել դեպի հարազատ դպրոց:<br>Դպրոցի շրջանավարտների հետ համագործակցության պակաս<br>Դպրոցի բյուջեի սուղ միջոցների պատճառով կրթություն թերթի բաժանորդագրություն չի իրականացվում |

## ՆՊԱՏԱԿ

Սովորողների սոցիալականացման ապահովում

## ԽՆԴԻՐՆԵՐ

1. Համագործակցել տարածքային կառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ
2. Համագործակցել կրթական հաստատությունների հետ

3. Ձևավորել քաղաքացիական հասարակության ակտիվ քաղաքացի

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Անցկացնել հանդիպում ցերեկույթներ արվեստագետների, արհեստագործ վարպետների մշակութային գործիչների հետ

2.Կազմակերպել այցելություններ մշակութային կենտրոններ

3. Համագործակցել բուհերի հետ

4.Կազմակերպել տարաբնույթ էքսկուրսիաներ հայաստանի պատմամշակութային վայրեր, այցելություններ թանգարաններ, ցուցասրահներ ,թատրոններ

5.ԴՍաստիարակել կամավորության առաջնորդության մասնակցային արժեքներ կրող քաղաքացիներ

## *ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ*

*Ուսումնական միջավայրը կրթության կարևորագույն բաղադրիչներից մեկն է , որը նպաստում է ոչ միայն կրթության որակի բարձրացմանը, այլև սովորողի առողջության պահպանմանը և ֆիզիկական զարգացմանը:*

| Ուժեղ կողմեր | Թույլկողմեր |
|---|---|
| Հաստատությունն ունի շենքային բավարար պայմաններ/ ջեռուցման լոկալ համակարգ, շուրջօրյա ջրամատակարարում: դասասենյակներ, գրադարան, լաբորատորիա, համակարգչային սենյակ, ինտերնետ կապի առկայություն/ ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար՝ ապահովելով օրենսդրությամբ սահմանված պայմաններ, որի շնորհիվ դպրոցի աշակերտական կազմը տարեց տարի համալրվում է | Գեղեցիկ և ժամանակակից կահավորված միջանցքների բացակայություն,<br>Դպրոցի տարածքը ասֆալտապատ չէ<br><br>ԿԱՊԿ ունեցող երեխաների համար խելամիտ հարամարեցումների բացակայություն<br><br>Գրադարանը ապահովված չէ գեղարվեստական, մեթոդական գրականությամբ<br><br>Ժամանակակից էլեկտրոնային գրադարանի և տիպային լաբորատորիաների բացակայություն<br><br>Առարկայական կաբինետների բացակայություն |

| | |
|---|---|
| | Համակարգչային կաբինետների հագեցվածության պակաս<br>Ազգային երգ ու պարի ուսուցում<br>Թատերական խմբակի և երգչախմբի ստեղծում<br>Համագործակցություն այլ դպրոցի նույն տարիքի սովորողների հետ մրցույթների, բանավեճերի , քննարկումների միջոցով<br>Արևային էներգիայի համակարգի ձեռք բերում |

## ՆՊԱՏԱԿ

Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան ֆիզիկական միջավայրի և նյութատեխնիկական բազայի ապահովում

## ԽՆԴԻՐՆԵՐ

1. ԿԱՊԿ ունեցող սովորողների համար խելամիտ հարմարեցումներ
2. Նյութատեխնիկական բազայի համալրում
3. Առարկայական կաբինետների, լաբորատորիաների ստեղծում

և կահավորում

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարբեր ծրագրերի միջոցներով դպրոցի ներսում թեքահարթակների կառուցում

Նոր սերնդի համակարգիչների պրոյեկտորների ձեռք բերում

Լինգաֆոնային դասասենյակի կահավորում գույքով և տեխնիկայով

Գրադարանը պարբերաբար անհրաժեշտ գրականությամբ համալրում

***Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների***

***զարգացում ապահովող միջոցառումներ***

ՀՀ թևակոխել է կրթության բովանդակային բարոփոխումների նոր փուլ: Փոփոխվել է նաև Հանրակրթության պետական չափորոշիչը /ՀՊՉ/, որը հիմնված է սովորողների հմտությունների և կարողունակությունների վրա: Կրթական քաղաքականությունը մեծացնում է ուսուցիչների պատասխանատվությունը: Այսօր ուսումնադաստիարակչական գործունեության կենտրոնական դեմքը ուսուցիչը կարիք ունի իր կարողունակությունների հարստացնելու, որպեսզի կարաղանա սովորողի մոտ ձևավորել գիտելիք, հմտություն, դիրքորոշում և արժեքային համակարգ:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| Ուսուցիչների մասնագիտական որակների զարգացումն են ապահովում հաստատությունում և վերապատրաստող կազմակերպություններում պարբերաբար կազմակերպվող տարատեսակ միջոցառումները, դասընթացները, խորհրդատվություններն ու խորհրդակցությունները:<br>Ուսուցիչների մի մասը դասապրոցեսին կիրառում են նոր տեխնոլոգիաներ:<br>Բամավաստակ ուսուցչի բարեխիղճ աշխատանքի պատրաստակամություն:<br>Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի առկայություն<br>Ուսուցիչների փոխհամագործակցություն/ սկսնակ ուսուցիչներին օգնություն փոխդասալսումների | • Տարակարգի և կամավոր ատեստավորմանը մասնակցելու պասիվություն:<br>• Ուսուցիչները խուսափում են ԿԳՄՍՆ կողմից կազմակերպվող << Տարվա լավագույններ >> մրցույթին մասնակցելուց<br>• Դասապրոցեսին ՏՀՏ կիրառման պակաս/սմարթ գրատախտակի բացակայություն, մեդիա գրագիտության պակաս/<br>• Այլ ուսումնական հաստատությունների մանկավարժների հետ փորձի փոխանակման պակաս<br>• Ոչ բոլոր ուսուցիչներն են զբաղվում ինքնակրթությամբ<br>• Ուսուցչի խրախուսման սահմանափակ հնարավորություններ /դպրոցի սուղ միջոցներ/ |

| | |
|---|---|
| միջոցով/<br>Բաց դասերի կիրառումով դասի արդյունավետության բարձրացում<br>Պետական նոր չափորոշիչների կիրառման նպատակով 2-րդ,5-րդ, 7-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների վերապատրաստում<br>Դպրոցը ուսումնադաստիարակչական հարցերում փորձում է ապահովել աշակերտակենտրոն մոտեցում<br>Կազմակերպվում են բաց դասեր բազմազան մեթոդների ՏՀՏ կիրառմամբ<br><br>Մանկավարժական օրինակելի աշխատանքի համար ուսուցիչները արժանացել են դպրոցի տնօրենի խրախուսանքի/ շնորհակալագիր, պատվոգիր/ | • Որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումներին մասնակցելու մոտիվացիայի պակաս<br>• ՈՒսուցիչները դեռևս չեն տիրապետում նորՀՊՉ-ին և նրանից բխող մեթոդական և ծրագրային փոփոխություններին<br>• Թեև առարկաների դասավանդման համար ուս.պլանի ժամաքանակները բավարար են առարկայի յուրացման համար, սակայն սովորողները շարունակում են հաճախել կրկնուսույցի պարապմունքների: |

## ՆՊԱՏԱԿ

Մանկավարժական համակազմի որակական բարելավում

## ԽՆԴԻՐՆԵՐ

ՈՒսուցիչների ինքնազարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպում

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Մեթոդ- միավորումների հետ կազմել  ուսուցիչների ինքնազարգացման պլանի օրինակելի նմուշ

Աջակցել <<Տարվա լավագույններ>> մրցույթին մասնակցելու համար

Մանկավարժների ուսուցումն ու զարգացումը կազմակերպել ֆորմալ և ոչ ֆորմալ եղանակով

Նյութերով համալրել գրադարանը՝ ատարկայական ծրագրերի սիդիներ, դիդակտիկ պարագաներ ,պաստառներ

| *Հաստատության տրամադրած կրթության որակը* | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| Հանրակրթության ոլորտում հիմնական գերակայությունը սովորողների ուսման որակի բարձրացումն է , որի նախապայմանն է ուսումնական հաստատությունների կողմից կրթական առաքելության գիտակցումը:<br>**Դպրոցն ապահովում** է յուրաքանչյուր սովորողի կրթության և դաստիարակության հավասար իրավունքը: Կրթության որակի բարձրացման գործողությունների շրջանակում ուշադրություն են դարձվում կրթական չափորոշիչների և ծրագրերի արմատավորման ուղղությամբ: Աշխատանք է կատարվել ուսման որակը բարելավելու, աշակերտների կարողությունների, հմտությունների, արժեքային համակարգի և դիրքորոշումների զարգացման ուղղությամբ: Առողջության պահպանման և անվտանգ կենսագործունեության, ռազմահայրենասիրական, հայրենասիրական և բարոյական դաստիարակության ամրապնդելու ուղղությամբ աշխատանքներ են տարվել: Որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական անձնակազմը տիրապետում և կիրառում է տարբեր մեթոդներ:Շնորհիվ մանկավարժների կողմից կիրառվող փոխներգործուն մեթոդների և հնարների՝ աշակերտները ստանում են բավարար գիտելիքներ՝ զարգացնելու կոմպետենցիաները, այն է՝ գիտելիք, հմտություն, քննադատական | • Առարկայական օլիմպիադաների մասնակցության ցածր մակարդակ<br><br>• Մարզական միջոցառումների մասնակցության ցածր մակարդակ<br><br>• Դասարանական, արտադասարանական, արտադպրոցական բազմաթիվ նպատակային միջոցառումների ու ծրագրերի մասնակցության պասիվություն<br><br>• Երկկազմ դասարանի առկայություն |

| | |
|---|---|
| մտածողություն, արժեքային համակարգ:<br>Երեխաները սիրով այցելում են <<Հառիճի արվեստի դպրոց>>ՀՈԱԿ-ի խմբակների, ստացել բազմաթիվ շնորհակալագրեր:<br>Որպես կրթության որակի ցուցանիշ պետք է նշել, շրջանավարտների ընդունվելը բարձրագույն ուսումնական հաստատություններ:<br>Դպրոցում սովորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 1 աշակերտ, որի ուսուցումը կազմակերպվում է տնային ուսուցմամբ: ՈՒսուցիչները համագործակցելով ՏՄԱԿ-ի բազմամասնագիտական թիմի, ծնողների հետ, ըստ սահմանված կարգի և ժամանակացույցի իրականացնում են տնային ուսուցումը, ապահովելով սովորողի կրթություն ստանալու իրավունքը: | |

| | |
|---|---|
| Կրթության որակի գնահատումը սովորողի մոտ կարողունակության զարգացման աստիճանը բնութագրող վերջնարդյունք է, ըստ ձեռք բերված գիտելիքների և հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների և արժեքների ձևավորման  չափորոշչային պահանջներին համապատասխան։<br>Գնահատումը իրականացվում է 2 ձևով՝ միավորային և ուսուցանող։<br>Դպրոցը նախատեսում է ուսուցանող գնահատումը իրականացնել մինչև 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակ բնութագրման միջոցով, իսկ միավորային գնահատումը ՝9-րդ դասարան ներառյալ։ Գնահատումը իրականացվում է 2 եղանակով՝ ընթացիկ,/ բանավոր, թեստ, գործնական , նախագծային աշխատանք/, և ամփոփիչ /ըստ կիսամյակների արդյունքի՝ ըստ տարեկան, ըստ կրթական աստիճանների՝ գիտելիքների ստուգում և ամփոփիչ ատեստավորում։<br>ԿԱՊԿ ունեցող աշակերտների գնահատումը իրականացվում է ըստ ԱՌԻՊ-ի 10 միավորանոց սանդղակով։<br>Կրթության որակը դպրոցում գնահատվում է հետևյալ չափանիշներով՝<br>1. ուսումնական գործընթացի առկա վիճակը/ աշակերտի կարիքին համապատասխան ուսուցման կազմակերպում<br>2 կրթական գործընթացի կատարողականը/մանկավարժական և վարչատնտեսական աշխատակիցների աշխատանքի կազմակերպման հատուկ պլանավորված մեխանիզմի առկայություն/<br>3կրթական գործընթացի արդյունավետությունը/հասարակական կարիքներին համապատասխան կրթության բոլոր մասնակիցների փոխգործակցություն | |

| | |
|---|---|
| 4ուսումնադաստիարակչական միջոցառումների որակը/ դպրոցական միջոցառումների, խմբակներ, նախագծերի իրականացում և կարգապահության արմատավորում:<br>Բուլինգի կանխարգելման հարցում ուսուցիչներն ունեն իրենց մեծ ազդեցությունը:<br>Բաց դասերին, դաստիարակի ժամերին պարբերաբար անդրադառնում են խնդրին, քննարկում երևույթը , խոսում վատ ազդեցությունների մասին:<br>ՏՄԱԿ-ի հոգեբանը երբեմն զրույցներ է ունենում սովորողների հետ, նաև հանդիպում դասարանների հետ: | |

ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

| | 2018-2019 ուստարի | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 Ուստարի |
|---|---|---|---|---|---|
| Ընդհանուր առաջադիմություն | 100% | 100% | 100% | 100% | Ընթացքի մեջ է |
| Որակական առաջադիմություն | 45% | 52% | 58% | 60% | Ընթացքի մեջ է |

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹԻՎ

| Սեպտեմբերի 1-իդրությամբ | 2018-2019 ուստարի | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 Ուստարի |
|---|---|---|---|---|---|
| Աշակերտներիթիվ | 112 | 120 | 120 | 125 | 135 |

## Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ստեղծում

| | |
|---|---|
| Դպրոցում նախատեսվող խմբակները /առողջ ապրելակերպ, մասնագիտական կողմնորոշման / կնպաստեն աշակերտների սոցիալականացման և ինքնուրույն կյանքի նախապատրաստման համար։<br>Նախագծային աշխատանքի ներդրումը կնպաստի աշակերտների համար բազմակարծիք, մասնակցային միջավայրի ձևավորմանը։<br>Նախագծային մեթոդի  հիմնական նպատակը սովորողներին գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելն է՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով։<br>Նախագծային մեթոդը հետազոտական ստեղծագործական մեթոդների համադրություն է ։ Այստեղ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի , փորձագետի, խորհրդատուի դեր։ Սա նշանակում է , որ նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը։<br>Դպրոցում ձևավորված է բարոյահոգեբանական արժեքային միջավայր, որտեղ կրթության գործընթացի մասնակիցները/ ծնող, աշակերտ, մանկավարժ, կառավարման մարմին / գործում են փոխհամաձայնեցված՝ | *ԿԱՊԿ ունեցող սովորողների համար խելամիտ հարմարեցումների բացակայություն*<br><br>*Թեքահարթակների բացակայություն*<br><br>*Հարմարեցված զույքի բացակայություն* |

| | |
|---|---|
| ապահովելով սովորողի իրավունքների պաշտպանության արդյունավետությունը:<br>Բազմակարծությունը ենթադրում է բազմազանության ճանաչում, երկխոսության խթանում, ինչպես նաև ներառումը, հարգանքը և հանդուրժողականությունը մյուսի նկատմամբ և նրանց իրավունքի նկատմամբ, ոչ միայն տարբերվել այլ նաև արտահայտել իրենց տարբերությունը:<br>Բամակարծությունը նաև տարբեր հետաքրքրություններով , տեսակետներով կենսակերպով ծագմամբ և համոզմունքներով խմբերի խաղաղ համակեցությունն է:<br>Բուժքրոջ այցելությունը դպրոց և սովորողի ամենամյա բուժզննումը բխում է աշակերտի առողջական շահերի պաշտպանությունից:<br>Հաստատությունում սովորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 1 աշակերտ, որի ուսուցումը կազմակերպվում է տնային ուսուցմամբ: Աշխատանքները արդյունավետ է համագործակցելով ծնող-ՏՄԱԿ-ի բազմամասնագիտական թիմի- ուսումնական հաստատություն:<br>Անհրաժեշտ խելամիտ հարմարեցումների դեպքում հնարավոր է երեխայի ուսուցումը կազմակերպել առկա ուսուցմամբ: | |

*ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ*

| | |
|---|---|
